ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 12-Ա

Արթիկ համայնք 27 մարտի 2020թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N 3 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2016թվականի նոյեմբերի 30-ի թիվ 54-Ն որոշմամբ ընդունված կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել նիստի հետևյալ օրակարգը

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 60-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: /զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Մխիթար Վարագյան/
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի կարիքների համար լուսադիոդային լուսատուների ձեռքբերման համար կազմակերպված ՇՄԱՔ-ԳՀԱՊՁԲ-20/7 ծածկագրով գնման ընթացակարգը չեղյալ համարելու մասին: /զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Մխիթար Վարագյան/
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու դեկտեմբերի 5-ի թիվ 56-Ա որոշման հավելված 2-ի մեջ փոփոխություն կատարելու մասին: /զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Մխիթար Վարագյան/

Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 9 անդամներ՝
Կողմ՝ 9 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Կողմ՝ 9

Վարդանյան Ոսկան

Հակոբյան Տարոն

Ղուլիջողյան Ռաֆիկ

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Աբրահամյան Ալեքսան

Նիկողոսյան Արմեն

Հակոբյան Հարություն

Չոփիկյան Արտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝_____ՄԽԻԹԱՐ ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,
2020թվականի մարտի 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 13-Ն

Արթիկ համայնք 27 մարտի 2020թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 60-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ մասով, 90-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 6-րդ մասերով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 5-րդ մասերով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 60-Ն որոշման մեջ բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները

1) Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում բաժնի <<Հատուկ նպատակային այլ նյութեր>> (4269) հոդվածում գրված <<300000 երեք հարյուր հազար>> թիվը և բառերը փոխարինել <<1300000 մեկ միլիոն երեք հարյուր հազար>> թվով և բառերով:

2) Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ(այլ դասերին չպատկանող) բաժնի

ա/ <<Հատուկ նպատակային այլ նյութեր>> (4269) հոդվածում գրված <<498000 չորս հարյուր իննսունութ հազար>> թիվը և բառերը փոխարինել <<4698000 չորս միլիոն վեց հարյուր իննսունութ հազար>> թվով և բառերով:

բ/ <<Մասնագիտական ծառայություններ>> (4241) հոդվածում գրված <<0 զրո>> թիվը և բառը փոխարինել <<1000000 մեկ միլիոն>> թվով և բառերով:

3) ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ բաժնի <<Պահուստային միջոցներ>> (4891) հոդվածում գրված <<80118900 ութսուն միլիոն մեկ հարյուր տասնութ հազար ինը

հարյուր>> թիվը և բառերը փոխարինել <<73918900 յոթանասուներեք միլիոն ինը հարյուր տասնութ հազար ինը հարյուր >> թվով և բառերով:

Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 9 անդամներ՝

Կողմ՝ 9 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Կողմ՝ 9

Վարդանյան Ոսկան		Հակոբյան Տարոն	
Ղուլիջողյան Ռաֆիկ		Մկրտչյան Մուշեղ	
Վարագյան Մեսրոպ		Աբրահամյան Ալեքսան	
Նիկողոսյան Արմեն		Հակոբյան Հարություն	
Չոփիկյան Արտակ			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝_____ՄԽԻԹԱՐ ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2020թվականի մարտի 27

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 14-Ա

Արթիկ համայնք 27 մարտի 2020թվական

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԼՈՒՍԱԴԻՈԴԱՅԻՆ ԼՈՒՍԱՏՈՒՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՇՄԱՔ-ԳՀԱՊՁԲ-20/7 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԵՂՅԱԼ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, <<Գնումների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 58-րդ կետով Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Արթիկի համայնքապետարանի կարիքների համար լուսադիոդային լուսատուների ձեռքբերման համար կազմակերպված <<ՇՄԱՔ-ԳՀԱՊՁԲ-20/7>> ծածկագրով գնման ընթացակարգը ամբողջությամբ չեղյալ համարել հրավերով նախատեսված մատակարարվելիք ապրանքների տեխնիկական բնութագրում առկա թերության պատճառով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակման հաջորդող օրվանից:

Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 9 անդամներ՝

Կողմ՝ 9 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Կողմ՝ 9

Վարդանյան Ոսկան		Հակոբյան Տարոն	
Ղուլիջողյան Ռաֆիկ		Մկրտչյան Մուշեղ	
Վարագյան Մեսրոպ		Աբրահամյան Ալեքսան	
Նիկողոսյան Արմեն		Հակոբյան Հարություն	
Չոփիկյան Արտակ			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՄԽԻԹԱՐ ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք, 2020թվականի մարտի 27

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 15-Ա

Արթիկ համայնք 27 մարտի 2020թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԹԻՎ 56-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ 2-Ի ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքի 33-րդ հոդված 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով. 57-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 56-Ա որոշման հավելված 2-ով հաստատված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և հանրային կապերի բաժնի /2.3-10 ծածկագրով/ գլխավոր մասնագետի հաստիքը կրճատել:
2. Հաստիքացուցակում ավելացնել ևս մեկ հայեցողական պաշտոն՝ համայնքի ղեկավարի տեղակալ՝ տնտեսական զարգացման գծով:
3. Տնտեսական զարգացման գծով տեղակալի վարձատրության չափ սահմանել 300.000 /երեք հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրը:

Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 9 անդամներ՝

Կողմ՝ 9 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0
Կողմ՝ 9

Վարդանյան Ոսկան
Հակոբյան Տարոն
Ղուլիջողյան Ռաֆիկ
Մկրտչյան Մուշեղ
Վարագյան Մեսրոպ
Աբրահամյան Ալեքսան
Նիկողոսյան Արմեն
Հակոբյան Հարություն
Չոփիկյան Արտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝_____ՄԽԻԹԱՐ ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք, 2020թվականի մարտի 27